

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Հ. Բ. Ը. Մ.-ի ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀԱՍՏԱՏԱԾ է ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՄԸ՝
Ս Փ Ի Ւ Ռ Ի Հ Ա Մ Ա Ր

Ա. ՍԵՐԵՐՆ ԵՆ

1. Պատմուածքի (կամ նորավիճերու) հաւաքածոյ մը, կամ՝ վէպ մը՝ 200 էջ եւ աւելի:
2. Բանաստեղծութեան հաւաքածոյ մը՝ 125 էջ եւ աւելի:
3. Թատերախաղ մը (կամ թատերախաղերու հաւաքածոյ մը), 80 էջ եւ աւելի:
4. Ուսումնասիրութիւն մը՝ 200 էջ եւ աւելի:

Բ. ՄՐՑԱՆԱԿԻՆ ՊԱՐԴԵԽՆԵՐԸ

Դ Ռ

ա. Դրամական պարգևներ՝

- | | |
|----------------------|------------|
| 1. Պատմուածք կամ վէպ | 1500 տոլար |
| 2. Բանաստեղծութիւն | 1500 տոլար |
| 3. Թատերախաղ | 750 տոլար |
| 4. Ուսումնասիրութիւն | 1000 տոլար |

բ. Երկին հրատարակումը՝

Անկախ դրամական պարգեւներէն՝ մրցանակի արժանացած երկերը կը հրատարակուին Ալեք Մանուկեան Հիմնադրամին ծախքերով եւ անոր կողմէ: 100 օրինակ գիրք կը տրամադրուի հեղինակին, որուն կը պատկանի նաեւ վերահրատարակութեան ամէն իրաւունք:

Գ. ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Լեզուն է հայերէնը:
2. Երկերուն նիւթը փափաքելի է որ կապ ունենայ մեր մշակոյթին հետ՝ յատկապէս ուսումնասիրութեան պարագային:
3. Մրցումին մասնակցող գործերը պարտին ըլլալ անտիպ: Կըն-դունուին նաեւ երկեր, որոնցմէ մասեր լոյս տեսած են, բայց որոնք տպուած հատորով մը հանրութեան ներկայացուած չեն:

4. Զեռագիրները կը պարտին ըլլալ մեքենագրուած՝ ընթեռնելի եւ երեք օրինակ։ Անոնք պէտք է մեր գրասենեակը հասած ըլլան ամենչն ուշը մինչեւ Ապրիլ 30, 1972։
5. Մասնակցողները կը պարտին՝
- ա. Զեռագիրներուն համար գործածել մասնաւոր ծածկանուն մը։
 - բ. Միայն այդ ծածկանունը գնել ծրարին վրայ՝ որպէս առաջողի անուն։
 - գ. Անջատ եւ գոց պահարանով մը զրկել՝ երկին անունը, մէկ էջնոց ծանօթութիւն մը երկին մասին, այս առիթով գործածուած ծածկանունը, իրենց բուն անունը՝ ըստ ինքնութեան թուղթի, մնայուն դրչանունը եթէ ունին, եւ իրենց հասցէն։
 - 6. Մրցումին արդիւնքները պիտի ծանուցուին 1972ի ընթացքին։
 - 7. Մրցանակ պիտի ստանան առաջնութիւն շահողները միայն։
 - 8. Վարձատրութիւնն արժանի երկ չգտնելու պարագային՝ դատական կազմը կրնայ արևեալ բաժինի մը մէջ մրցանակ չտալ։
 - 9. Կը ծանուցուին մրցանակ շահողներուն անունները միայն։
 - 10. Դատական կազմին անունները կը հրապարակուին մրցանակաւորներու անուններուն ծանուցման օրը։

Դ. Առաքումները կատարել հետեւեալ հասցէին։

A. Manoogian Cultural Fund (Literary Prize)

22001 Northwestern Highway

Southfield, Mich. 48075 |

U. S. A.

Ե. Յետ այսու՝ Հիմնադրամն հրատարակութեան համար նկատի պիտի ունենայ միայն այն գիրքերը, որոնք մասնակցած են մրցանքին եւ արժանացած առաջնութեան։ | | |

ԱՐԺ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻ